

Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
- 2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

- 1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը .
- 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
- 4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
- 5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «ՀՀ Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 2021 թվականի դեկտեմբերի 9-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 29 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9⁰⁰-ից մինչև ժամը 13⁰⁰-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունվարի 14-ին՝ ժամը 12⁰⁰-ին, «ՀՀ Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Անտառամեջ, 2-րդ փ. 11 շենք:

Տեղեկությունների համար կապ հաստատել 098802710, 094486436 հեռախոսահամարներով կամ գրել stepanyangohar139@gmail.com , ninamartirosyan510@gmail.com էլեկտրոնային հասցեներին: